ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 609-Ա « 19 » փետրվարի 2024 թ.

ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԿՈՆԴ ԹԱՂԱՄԱՍ Հ.206 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՆՐԻԿ ԱՇՈՏԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հենրիկ Աշոտի Սահակյանի (ծնված 02.08.1962թ.) 04.12.2023թ. հ.Դ-151343-23 դիմումը: Երևան, Կենտրոն, Կոնդ թաղամաս հ.206 հասցեում գտնվող ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 153.5քմ, որից 49.0քմ մակերեսով հողամասը Հենրիկ Աշոտի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (ըստ օրենքի ժառանգության իրավունքի 01.12.2023թ. հ.13376 վկայագիր):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 12.02.2024թ. հ.Հ-591 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 15.02.2024թ. հ.20-Ել-151343-23 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Կենտրոն, Կոնդ թաղամաս հ.206 հասցեի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1. Վերականգնել Երևանի Կենտրոն, Կոնդ թաղամաս հ.206 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Հենրիկ Աշոտի Սահակյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 49.0քմ մակերեսով հողամասին կից 104.5քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 104.5քմ մակերեսով հողամասի (որից 83.2քմ ընդհանուր համատեղ սեփականություն է Արմեն Գևորգյանի, Գայանե Սահակյանի, Վլադիմիր Գրիգորյանի, Աղվան Օսիպյանի, Մանուկ Սահակյանի, Լալա Հմայակյանի հետ) և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ